

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26/6

4 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Լուսիկ Սիմոնյանի 06.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ պետի ժ/պ 13.05.2014 թ-ի թիվ 434 որոշման դեմ:

Ա/Ձ Լուսիկ Սիմոնյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ (այսուհետև՝ պատասխանող), պետի ժ/պ-ի 13.05.2014 թ-ի թիվ 434 որոշմամբ որոշվել է Ա/Ձ Լուսիկ Սիմոնյանից գանձել 418.135 դրամ պարտավորության գումար, որից պարտադիր սոցիալական ապահովության վճար 371.402 դրամ, այդ թվում՝ ապառք 240.000 դրամ, տույժ 131.402 դրամ, հաստատագրված վճար 41.576 դրամ, եկամտահարկ 5157 դրամ:

Հաստատագրված վճարի և եկամտահարկի պարտավորություններն գանգատաբերի կողմից ընդունվել են և 13.08.2014 թ-ին կամովին վճարվել են, սակայն պարտադիր սոցիալական ապահովության 371.402 դրամ պարտավորությունն չի ընդունվում, քանի որ այն ոչ իրավաչափ է, ակնհայտ անհիմն, և որոշումն այդ մասով ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանություններով:

Գանգատաբերը, որպես անհատ ձեռնարկատեր, գործունեություն է իրականացրել մինչև 2002 թ-ի նոյեմբերը, որից հետո ձեռնարկատիրական որևէ գործունեություն չի իրականացրել, ինչը կարող է հաստատել նաև պատասխանողը, քանի որ 2002 թ-ի նոյեմբերից հետո որևէ հաշվարկ-հաշվետվություն չի ներկայացրել հարկային մարմին, և հարկային մարմինն էլ որևէ փաստ չի կարող ներկայացնել հակառակն ապացուցելու համար:

2002 թ-ին գործող օրենսդրությամբ սահմանված չէր պետական գրանցման վկայականը հարկադիր մարմին հանձնելու որևէ պարտականություն:

«Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներում չնշված անհատ ձեռնարկատերերն ազատվում են 2003-2005 թ.թ.-ի համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից (բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված դեպքի):

Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի կողմից 2006 թ-ի հունվարի 1-ից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներ չեն հաշվարկվում (չեն վճարվում):

Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի ցանկերը (2003-2005 թ.թ. համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների պարտադիր նշումով) հարկային տեսչությունները մինչև 2006 թ-ի սեպտեմբերի 1-ը ներկայացնում են պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ մինչև 2006 թ-ի նոյեմբերի 1-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, նրանց վկայականներն անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար:

Կոտայքի ՏՀՏ-ն կրելով վերը նշված հոդվածով սահմանված կարգով անհատ ձեռնարկատերերի ցանկերը, այդ թվում նաև՝ Ա/Ձ Լուսիկ Սիմոնյանի, մինչև 2006 թ-ի սեպտեմբերի 1-ը պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային

ստորաբաժանում ներկայացնելու պարտականությունն անգործություն է ցուցաբերել, որի արդյունքում պարտադիր սոցիալական ապահովագրության նվազագույն վճարների գծով առաջադրվել են պարտավորություններ:

Վերոնշյալ օրենքի ուժով գանգատաբերն ազատված է եղել մինչև 2005 թ-ն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված և չվճարված վերը նշված գումարների և դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից, իսկ 2006 թ-ի հունվարի 1-ից հետո պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումար չպետք է հաշվարկվեր, քանի որ վերը նշված օրենքի ուժով ազատվել է պարտադիր սոցիալական ապահովության վճարի և դրա նկատմամբ հաշվարկված տույժերի գծով պարտավորությունների կատարումից:

19.12.2012 թ-ին ընդունված և 01.01.2013 թ-ին ուժի մեջ մտած «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվել «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ 2005 թ-ի նոյեմբերի 11-ի ՀՕ-215-Ն և «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին ՀՀ 2008 թ-ի օգոստոսի 21-ի ՀՕ-151-Ն օրենքը:

Տվյալ դեպքում, կիրառման են ենթակա ուժը կորցրած վերոնշյալ օրենքները «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 2-րդ պարբերության դրույթների հիման վրա: Ստացված եզրահանգման հիմքում ընկած է հետևյալ հիմնավորումը.

Եկամտահարկի և սոցիալական վճարի նվազագույն գումարների գծով պարտավորություններից ազատվելու արտոնություն սահմանված է եղել ուժը կորցրած վերոնշյալ օրենքներով և սահմանված է նաև նոր ընդունված օրենքով: Դրանցով սահմանված իրավակարգավորումների տարբերությունը կայանում է կիրառման նախապայմանների մեջ: Հատկանշական է, որ նոր ընդունված օրենքով սահմանված արտոնությունը կիրառելի է անխտիր բոլոր անհատ ձեռնարկատերերի նկատմամբ և վերաբերում է միայն մինչև 2008 թ-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակաշրջանի համար հաշվարկված պարտավորությունները: Իսկ ուժը կորցրած վերոնշյալ օրենքներով սահմանված արտոնությունը կարող է վերաբերել նաև այդ ամսաթվից հետո ձևավորված պարտավորություններին: Այսինքն, եթե ուժը կորցրած օրենքները կիրառելի են լինում տվյալ սուբյեկտի նկատմամբ, ապա դրանով սահմանված արտոնություններն ավելի լայն են, քան նոր ընդունված օրենքով սահմանված արտոնությունները: Նշվածը հիմք է տալիս այնդեպի, որ «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի ուժով գանգատաբերն ազատվել է պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի և դրա նկատմամբ հաշվարկված տույժերի գծով պարտավորությունից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենսգրքի 63-65-րդ, 70-72-րդ հոդվածներով, գանգատաբերը խնդրում է ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ պետի ժ/պ-ի 13.05.2014 թ-ի թիվ 434 որոշումը պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 371.402 դրամ գումարի գանձման մասով մասնակի անվավեր ճանաչել:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ պետի ժ/պ-ն, քննարկելով Ա/Ձ Լուսիկ Սիմոնյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 13.05.2014 թ-ին ընդունել է թիվ 434 որոշումը, որի համաձայն 06.05.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Լուսիկ Սիմոնյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 418.135 դրամ, որից պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով 371.402 դրամ, հաստատագրված վճարի գծով 41.576 դրամ, եկամտահարկի գծով 5157 դրամ:

Ա/Ձ Լուսիկ Սիմոնյանի գանգատը վերաբերվում է պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով առաջադրված պարտավորությանը:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ՀՀ պետական ռեզիստրի կողմից 14.06.2000 թ-ին տրամադրված անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա061221 վկայականի համաձայն քաղաքացի Լուսիկ Սիմոնյանը գրանցված է ՀՀ պետական ռեզիստրում որպես անհատ ձեռներեց 13.06.2000 թ-ից: Ընդ որում, անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա061221 վկայականում նշված է, որ վկայականը ուժի մեջ է միայն ներդիրի հետ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով վերոգրյալ վկայականի 14.06.1998 թ-ի թիվ 01 ներդիրն արձանագրեց, որ վերջինիս համաձայն Ա/Ձ Լուսիկ Սիմոնյանի գործունեության ժամկետը սահմանված է մինչև 31.12.2005 թ-ը:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից»:

Քննարկվող դեպքում անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 043885 վկայականում, ինչպես նաև վկայականի 14.06.2000 թ-ի թիվ 01 ներդիրում կատարված գրառումների համաձայն, Ա/Ձ Լուսիկ Սիմոնյանը 01.01.2006 թ-ից դադարել է անհատ ձեռնարկատեր համարվել: Այսինքն, դադարել են Լուսիկ Սիմոնյանի որպես անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Լուսիկ Սիմոնյանի նկատմամբ 2009 թ-ից մինչև 2012 թ-ն ընկած ժամանակահատվածի համար նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություններ չեն կարող հաշվարկվել:

Ինչ վերաբերվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի ժ/պ 13.05.2014 թ-ի թիվ 434 որոշմամբ հաստատագրված վճարի և եկամտահարկի գծով գանձման առաջադրված գումարներին, ապա հաշվի առնելով, որ դրանք առաջացել են մինչև 2006 թ. ընկած ժամանակահատվածում, հետևապես ենթակա են վճարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ պետի ժ/պ 13.05.2014 թ-ի թիվ 434 որոշումից նվազեցնել պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով առաջադրված պարտավորությունը՝ գումարով 371.402 դրամ:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝

Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ

